

տոյ » բացատրութիւնը՝ քան Ղ. Փարպեցիի վեց անգամ կրկնածը. «Թէպէտ զձեռնադրութիւն երիցութեան ունէր այլ զկաթողիկոսութեան զաթոռն ունէր Հայոց ի ժամանակին»։ որու մասին կարծես ինքն ալ կը տարակուսի եւ իր ընթերցողին կասկածն ալ փարատելու համար կ'ըսէ անգամ մըն ալ. « զարդարեւ կաթողիկոսն Հայոց »:

Ուստի կրնանք եզրակացնել թէ Եղիշէ այս խնդրին մէջ ալ շատ աւելի տեղեակ է եւ աւելի մօտ ապրած դէպքերու քան Փարպեցին՝ որ յիստուն տարի վերջ արձանագրած է պատմութիւնը, երբ շատ փոխ-

ուած էին պարագաները: Եւ թէպէտ Եղիշէ՝ պատմութեան գիրք մը չէ որ գրած է, բայց իր տուած տեղեկութիւնները ցոյց կու տան թէ ինք «օտար մը չէ եւ ո՛չ ալ Հայ շրջանակէն հեռու ապրած» որպէսզի չկարենար գիտնալ Հայ կաթողիկոսին իսկական տիրոջը. այլ ապրած է պատմական այն շրջանին՝ որու մասին կը գրէ եւ շատ լաւ գիտցած է արտայայտել նոյն ժամանակի բացառիկ գիրքի մէջ գտնուող մեր եզակի կաթողիկոսին տիրոջը, իր «Յովսէփ Եպիսկոպոս Այրարատոյ» բացատրութեամբ:

Հ. Պ. ՀԱՄԷԼԵԱՆ

Ս Ո Ր Ե Ն Ե Ն Ո Յ

Սորբենքոյ, ծաղկաշաղախ, դալարագեղ ավերով,
Երգերըդ շաղ եմ գալիս պայծառ հորիզոններում,
Ալիքներդ եմ վազվզում փրփուր-փրփուր ծափերով,
Գիթարի ձայնն է կաթում քո առափնեայ ջրերում:

Ո՛րքան սէր կայ քո ծոցում ու ո՛րքան երգ՝ քո գրկում,
Քո լանջերում, քո ծովում, քո գեղուն հովերի մէջ,
Աղջիկներիդ սրտերում, տղաներիդ տափ հոգում,
Սորբենքոյ, ջինջ մեղեդի՛, սիրակոհակ, սիրաէջ:

Դու՝ համակ կենսակարկաչ, չփնաղ ու գեղածիծաղ,
Անուրջ ու ցոլփ կայ փռուած ավունքներում քո լուսէ,
Ա՛յնքան շող ունես, արե՛ւ, ու ա՛յնքան խիղճ ու ծիծաղ,
Սորբենքոյ, դու՝ վառ հրմայֆ, Սորբենքոյ, դու՝ երգ ու սէր:

Սորբենքոյ

Դեի

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ ՆԱՐԵԿԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ՄԷՁ

Մարդկային մարմնոյն քառասոր կազմը. — Հոգին եւ մարմինը — հոգեվարքն ու դեակնացած մարմինը:

(Շար. Բազմ. 1951. Թիւ 7-8, էջ 156)

Ա.

Նարեկացիին ողբերգութեան մատենանին մէջ, բժշկական գիտելիքներու հետ կապ ունեցող հարցերը, հպանցիկ յիշատակութիւններու կարգին դասուած են:

Հակառակ այդ հանգամանքին, բժշկութիւնը հոն բոյն գտած է իր բազմազանի ճիւղաւորումներովը, հոգեբանական հարցերու առնթներ:

Այդ կարգի յիշատակութիւններ ցրուած կը գտնենք աղօթամատենին զանազան էջերուն մէջ, ու գրի առնուած են գրական այնպիսի հոգեչունչ ոճով մը, որ գիտական չոր ու ցամաք հարցերը, տաղանդաւոր քնարերգական գրչին տակ, կը կորսնցընեն իրենց անհրապոյր հանգամանքը, կը պճնուին իմաստասիրական եւ բանաստեղծական յղացումներու տարազովը, ու կը վերածուին կատարեալ վայելքի մը:

Մարդկային կազմին նուիրուած հատուածը, իր ամբողջութեանը մէջ, այնպիսի՝ հրաշակերտ քանդակ մըն է, որ կրնայ ներշնչման աղբիւր դառնալ նկարիչին եւ արձանագործին, մարդ էակին հոյակապ կերտուածքը իր ամենացալոտն գիծերովը պատկերացնելու համար:

Ահա՛ այդ հատուածը՝ Թորգոմ Սրբազան Գուշակեանի կողմէ աշխարհաբարի վերածուած.

«Կանգնած՝ գեղ կրող երկու ոտներու վրայ, որոնք միաբան եւ համակցորդ են

իրարու, բայց իսկապէս հրեշտակի ձեւով կառուցուած եւ դուն, երկնահայեաց դիրքովդ եւ գոյգ բազուկներու վերամբարձ քեւերովդ...: Բոլորակ գլուխդ, ինչպէս բազմաստեղն քերան քրագի, մարմինիդ աշտանակին վրայ հաստատուեցաւ, որպէսզի տաճարին աշտանակին օրինակին շնորհիւ գլատուած տեսնելէ չը դադրիս, եւ անապական բաներու վրայ խորհիս: Բանականութեան պատիւով կրկնապէս նախացար, որպէսզի քեզի շնորհուած բանաստեղծութեանց գերազանցութիւնը համարակ լեզուով խօսիս: Ձեռքիդ եւ մատներուդ մեղ մեղ կազմութեամբը՝ արեւտական գործեր յօրինելու սահմանուեցար, ու այդ տեսակէտով, կերպով մը Աստուծոյ ամենաբաշխ աջին մամուլիւնը ունենալով վրադ, աստուած կոչուեցար: Երեք հարիւր վաթսուն յօդուածներով շաղկապուեցար, աւելի ունենալով տակաւին՝ հինգ զգայարաններու զգայուն մասերը, եւ այս՝ որպէսզի մարմինիդ արտաքին նիւթական կազմութիւնը անիմատ չերելի մտքիդ. այդ ամէնուն մէջ կան որ խոշոր են եւ գորաւոր, կան որ փոքր են եւ պիտանի, կան որ կարծրակերտ են եւ զգայուն, կան ալ որ կարեկան են եւ ամօքական: Իսկ այս կազմաւորութեան բացատրութիւնը, ո՛վ իմ եղկելի անձս, քու մէջդ նկատուած է արդէն իբրեւ անջրնջելի արձանի մը վրայ, եւ է այս՝ քե՛ ժամանակին ամենափոքր մասը, եւ օրե-

բուն՝ մինչեւ տարիին աւարտումը՝ յաջորդական շարունակութիւնը չափուած կշռուած են, մարմինին մասերուն հետ քուական համեմատութեան անսխալ եւ անայլայլ կանոնով մը »:

— ԲԱՆ ԽԶ —

Մենք հաճոյքով գետեղեցիներ այս պերճաւից արձանը մեր ուսումնասիրութեանը սեմին:

Ան աստուած կոչեցեալը կը մարմնացնէ, վեհաշուք՝ իր կերտուածքովը, խոհուն՝ իր իմացականութեան ցոլեցողովը, բեղուն՝ մարմնական ցայտուն յատկանիւններովը:

Արարչագործութեան հրաշալիքն է, կանգնած՝ «երկնահայեաց դիրքով» զոյգ մը «միաբան եւ համակցորդ» ոտքերու վրայ, օժտուած՝ զոյգ մը «վերամբարձ քեւերով», ճոխացած՝ ճեղ ճեղ ճարտար մատներու հոյլովը, փառաւորուած՝ «Բազմաստեղն նրազարանի» նման բուրակ գլխովը, չաղկապուած՝ 360 ոսկորներու յօդաւորումովը, որոնց վրայ եթէ աւելցնենք հինգ զգայարաններն ալ, ան կը խտացնէ իր մէջ տարուան 365 օրերու հոյլովթն ու ճոխութիւնը, որ՝ ըստ Նարեկացիին՝ պատահականութեան արդիւնքը պէտք չէ նկատել, այլ աստուածային գիտում մը:

Այս պատկերացումին մէջ թէ՛ բանաստեղծական հեւք կայ եւ թէ՛ մարդակազմական պաշար, քիչ մըն ալ միջնադարեան չափազանցութիւն՝ ոսկորներու թուին նրկատմամբ:

Ան իբր օրինակ կրնայ ծառայել նաեւ ըմբռնելու համար, թէ բժշկութեան հետ կապ ունեցող հարցերը ինչ ձեւով եւ քանակական որպիսի՞ պարունակութեամբ լուծուած են մատենային մէջ:

Ինչպէս որ վերի հատուածին մէջ կը տեսնուի, լուծոյթի վիճակին մէջ կը դրո-

նուին անոնք, բայց հակառակ այդ անընդհատ հանդամանքին, եթէ հոգածութեամբ դանոնք ի մի հաւաքենք եւ որոշ չափով դտումի ենթարկենք, կարելի է անոնցմով այնպիսի ամբողջութիւն մը կազմել որ ի վիճակի ըլլայ ո՛չ միայն Ժ. դարուն, այլ դրեթէ ամբողջ միջին դարու բժշկական գիտելիքներու խկութիւնը պատկերացնել:

Այդ ամբողջութեանը մէջ տեղ կը գրաւեն՝ աշխարհս կազմող չորեքտարրեան տեսակէտը, այդ տարրերուն յատկացուած յատկանիւնը, ինքնաբերական սերումի վարկածը, զուտ բժշկական հարցերու շուրջ արտայայտուած ողջամիտ դատումներ, ինչպէս նաեւ հոգեկան եւ մարմնական երեւոյթներու փոխադարձ հակադրեցութիւնները: Կայ տակաւին՝ մարդակազմականը, բնախօսականը, հոգեբանականը, հաւատքի ուժին բուժիչ հանգամանքը, աղիքներու ճիճին, լուն, հոգեվարքի պահերուն նկարագրութիւնը, մահուան ճիրաններուն մէջ քարացած դիակը, մէկ խօսքով՝ կեանքի եւ մահուան համադրութեան ծնունդ առած բարդ երեւոյթներու պատկերացումը, բժշկական գիտելիքներու ընդհանուր պարփակին մէջ գետեղուած:

Տեսնենք այժմ մեզ չահագրգռող այդ դանաղան հարցերուն էութիւնը:

Նարեկացիին թարգմանը հանդիսանալով միջին դարու մտայնութեան, համայն աշխարհս՝ մէջը ըլլալով նաեւ մարդը՝ քառանիւթ տարբերէ կազմուած կը նկատէ:

Արդարեւ, երկար դարեր գիտնականները այն համոզումը ունէին, թէ աշխարհս կազմուած է հողէ, ջուրէ, օդէ եւ հուրէ, եւ այս կենսական տարրերու խառնուրդովը բաղադրուած էին կենդանի եւ անկենդան մարմինները:

Մարդն ալ իր կարգին, կազմուած կը նկատուէր՝ արիւնէ, դեղին մաղձէ, սեւ մաղձէ եւ աւիշէ: Մարդկային մարմինն այս քառատարր կազմը, կը բացատրուէր

աշխարհիս քառանիւթ բաղադրութիւնովը, տաքութեան, պաղութեան, չորութեան եւ խոնավութեան յարակից յատկանիւններովը ճոխացած:

Ինչպէս որ տարուան չորս եղանակներուն տարբերութիւնները կը բացատրուէին չորս տարբերէն մէկուն կամ միւսին գերակայութիւնովը, նոյնպէս ալ մարդկային կեանքի դանաղան հանգրուանները, մանկութենէն սկսեալ մինչեւ ծերութիւն, կը պատճառաբանուէին արեան կամ դա-

նաղան մաղձերու քանակական փոփոխութիւններովը:

Անհատական խառնուածքի հարցն ալ համանման նկատումներու ենթարկուելով, մարդիկ կը բաժնուէին՝ աւշային, մաղձային եւ արիւնային դասակարգերու:

Նարեկացիին ալ իր կարգին, ահա՛ այս ներհակ տարբերուն ներդաշնակ համադրութեանը մէջն է որ կը փնտռէ մեր հոգեկան հաւասարակշռութիւնը, ու հետեւեալ կերպով կը բանաձեւէ զայն.

Մեծիդ փառքին համար ահաւոր եւ սքանչելի՝
Մարդուն կազմուածքը պատրաստեցիր ներհակ տարբերով,
Մէկը ծանր եւ միւսը քեթեւ, մէկը գով եւ միւսը հրային, —
Որպէսզի այս հակամարտներն իրարու հետ հաշտեցնելով՝
Անոնց ներդաշնակութեամբը կոչուինք արդար:

— ԲԱՆ ԶԶ —

Բայց երբ մարդս անհոգ կը գտնուի այդ չորս հակամարտ տարբերուն միջեւ ներդաշնակութիւնը պահել, կամ բոլորովին կ'անտեսէ անոնցմէ մէկուն գոյութիւնը, հոգեկան այդ հաւասարակշռութիւնը կը

բեկանուի, ու ան սայթաքումներու կ'ենթարկուի:

Վերոյիշեալ հատուածին շարունակութեանը, Նարեկացիին կը յարէ.

Բայց որովհետեւ այս կանոնին դէմ եղանք ուխտագանց,
Ահա քէ ինչո՛ւ մեր հողագանգուած խառնուածքին բերմամբ՝
Անասնօրէն սողոսկումներով երկրին յարեցանք:

Նարեկացիին այս տեսակէտը կրկնակ տեսակէտով հետաքրքրական է, ան ո՛չ միայն մեզի կը պարզաբանէ մարդկային մարմնոյն կազմին մասին անցեալին մէջ տիրող ըմբռնումը, այլ նաեւ երեւան կը հանէ, հոգեկան երեւոյթներու էութեան տեսակէտով, նարեկեան մասնայայտուկ մտածելակերպ մը, զոր իր ապրած շրջանին համար վրիպանք մը կարելի է նկատել, իսկ ներկայիս համար՝ գիտական աշխարհին կողմէ բանաձեւուած իրականութիւն մը: Մինչեւ վերջերս, մարդկային մարմինն ու հոգին անջատ միաւորներ կը նկատուէին: Մարմինը պարզապէս կաւէ պատեանն էր հոգին, մարմնական եւ հոգեկան երեւոյթները մէկը միւսէն անկախ

արտայայտութիւններ էին, չկար հոգին ու մարմինն միութեան, անքակտելի կապակցութիւններու եւ հակադրեցութիւններու զաղափարը:

Մարդկային բնութեան երկուութեան տեսակէտը, դարերու ընթացքին այնպիսի՛ խոր եւ հաստատուն արմատներ ձգած է մարդկային մտքին մէջ, որ ներկայիս մինչեւ իսկ՝ շատ մը նկատումներով կը շարունակենք տակաւին անոր բացարձակ տիրապետութեանը տակ գտնուիլ, ու չենք կրնար հրաժարիլ անկէ մեր կրօնական, իմաստասիրական եւ գրական ըմբռնումներու եւ արտայայտութիւններու առօրեայ յղացումներէն:

Մարդկային կազմին այս պարզունակ

ըմբռնումին լոյսին տակ, հոգին վանդակի մը մէջ արգելափակուած թռչունի մը կը նմանի, որ կ'երգէ, կը ճողորդէ, կ'ոստոստէ վանդակին մէջ, անոր հետ հպանցիկ չփոխաներ կ'ունենայ, միշտ մնալով անջատ միաւոր մը:

Ներկայիս բոլորովին տարբեր կերպով կը պատկերացուի մարդու կառուցուածքը:

Ճիշդ է որ մարդկային մարմինը, վերջի վերջոյ, քանի մը լիտր հեղուկով, ափ մը հոգով, քիչ մըն ալ օդով շաղախուած, քանի մը աստիճան ջերմութեամբ օժտուած մեքենայ մըն է:

Բայց այս մեքենան տարօրինակօրէն բարդ կառուցուածք մ'ունի, անոր բաղադրիչ տարրերը՝ ջրայինն ու կալցիւնը, հողեղէնն ու հրայինը՝ պարզ խառնուրդ մը, զուգադրութիւն մը չեն կազմեր, այլ դանդաղան տարրերուն իւրաքանչիւր հիւլէն մէկը միւսին հետ ձուլուած, քիմիական ամենաբարդ բաղադրութիւններով ճոխացած ու ալլափոխուած, որակական ու քանակական պատշաճ ներդաշնակութեամբ շաղախուած, կենդանութեան հոլով կենսաւորուած, ու անհատական դրոշմով նշանաւորուած ճարտարագիտական հրաշալի գլուխ գործոց մըն է:

Մեր նախնիքներուն կարծածին պէս, այդ մարմինը կաւեղէն պարզ պատեան մը չէ, վանդակ մը չէ, ուր հոգին կը բնակի, այլ Փիղիքական, քիմիական, հոգեկան, իմացական եւ զգայական պէսպիսի բարդ երեւոյթներու համադրութենէն եւ համագործակցութենէն ծնունդ առնող՝ անբաժանելի եւ անտարրալուծելի հոյակապ միաւոր մը:

Մեր հոգեկան, իմացական, զգայական եւ Փիղիքական արտայայտութիւններուն ակնադբիւրը՝ բջիջային այդ վիթխարի զանգուածին, եւ անկէ կազմուած ալլաղան հիւսուածքներուն եւ գործարաններուն համագործակցութեանը մէջ պէտք է

միտուել: Իւրաքանչիւր բջիջի դեր մըն է վիճակուած, որոշ նպատակի մը իրագործման կը ձգտի, բայց ոչ թէ ինքնակամ ուղղութեան մը հետեւելով, այլ իր ճիգերը համադրելով ու ներդաշնակելով մարմնոյն բիւրաւոր բջիջներու գործունէութեանը հետ:

Մեր մարմնոյն իւրաքանչիւր բջիջը, մեր իմացական, հոգեկան, Փիղիքական եւ այլ ձիրքերէն ու կարողութիւններէն մասնիկ մը կը կրէ:

Մենք կը մտածենք, կը դատենք, կը զգանք, կը յուզուինք ու կ'ապրինք մեր բջիջներուն իւրաքանչիւրին գործունէութիւնովն եւ ամէնուն ներդաշնակ համագործակցութիւնովը:

Այս պայմաններու մէջ, ինչ նկատումով ալ որ մօտենանք այս հարցին, կարելի չէ ոչ հոգին մարմինէն բաժնել, եւ ո'չ ալ մարմինը հոգիէն:

Ընդհակառակը, կայ մարդ անհատը, իբր ամբողջական շքեղ միաւոր, օժտուած՝ իմացական, բարոյական, Փիղիքական եւ այլ կարողութիւններու համաձուլ կերտուածքովն ու անհատականութիւնովը:

Թո՛ղ մեր մարմնէն անանուն բջիջ մը կորսուի, առանց փոխարինուելու. մեր անհատականութենէն եւ մեր ձիրքերէն հիւլէ մը կը պակսի:

Փորձեցէ՛ք մարդկային մարմինէն անջատել պղտիկ մսի կտորներէն մին, որոնց ներքնահոս գեղձի անունը կու տանք՝ սեռայինը կամ մակերիկամայինը, վահանազեղձը կամ նշագեղձը՝ յաճախ ենթակային կեանքը կը վտանգուի, իսկ եթէ կաւենայ ալ ապրի՛լ՝ Փիղիքապէս, հոգեպէս եւ իմացականօրէն ա՛յնքան կ'ալլասերի որ անճանաչելի կը դառնայ:

Արդ, տեսնենք այժմ թէ ի՞նչ է Նարեկացիին տեսակէտը այս մասին:

Երբ նկատի ունենանք, թէ տակաւին մինչեւ այսօր իսկ, հակառակ գիտական

բոլոր նուաճումներուն, չատեր կը շարունակեն մարդկային բնութեան երկուութեան տեսակէտին կառչած մնալ, պէտք չէ զարմանալ որ ժ. դարու մեր մեծ հեղինակն ալ նոյն դաղափարականին կողմնակից հանդիսանայ:

Նարեկի ողբերգութիւնը, ամբողջութեանը մէջ այդ հաւատամքին վրայ հիմնուած ըլլալով հանդերձ, կը պարունակէ այնպիսի հատուածներ, որոնց մէջ Նարեկացին իր ողջմտութենէն թելադրուած, մարդկային բնութեան միութեան ի նրպաստ փաստեր կը հայթայթէ, մատնանի ընելով հոգիին՝ մարմնոյն, եւ մարմինին՝ հոգիին հետ ունեցած սերտ կապակցու-

թիւնները, եւ այդ պարագաներէն ծնունդ առնող փոխադարձ հակադրեցութիւնները:

Միթէ Բան ԶԶ-էն յիշած մեր հատուածը այդ կարգի փաստ մը չէ՞: Հոն, բացայայտ կերպով մատնանշուած կը գրտնենք մարդկային Փիղիքական կազմին՝ հոգեկան առաքինութիւններուն հետ ունեցած սերտ կապակցութիւնը:

Նարեկացին, արդարութեան դաղափարը, որ զուտ հոգեկան արտայայտութիւն մըն է, անքակտելիօրէն կը կապէ մարմնոյն բաղադրիչ տարրերուն ներդաշնակ համադրութեանը եւ գործակցութեանը հետ, ու կ'ըսէ.

Որպէսզի այդ հալամարտներն իրարու հաշտեցնելով՝
Անոնց կատարեալ ներդաշնակութեամբը կոչուինք արդար:

Նոյն այդ հատուածին մէջ, ո'չ միայն արդարութիւնը, այլ նաեւ բարութիւնն ալ նոյն տեսակէտով կը բացատրէ:

Մեր օրերու գիտակից բժիշկի մը նման, որ չի տառամսիր ծաւալով արհամարհելի ներքնահոս գեղձի մը գործունէութեանը

խաթարումին վերադրել հոգեկան բեկում մը, Նարեկացին ալ իր կարգին, մատնանի չէ կ'ընէ այն աւերները՝ որոնք կրնան յառաջ գալ մարմինը կազմող նիւթերէն մէկուն սանձարձակ ասպատակութենէն, ու կ'ըսէ.

Իսկ երբեմն ալ այս չորս տարրերէն մէկն ուսելով դուրս՝
Անգապելի, անողոք սլացով՝
Վայրենիօրէն կ'ամբարտաւանէ:
Այսպէս երբ բռնկինք քու սիրոյդ տապով՝
Մեր մէջ գտնուող բոցի նըշխարեով,
Յուրտն առնըք-եր ու կենակից ըլլալով անոր՝
Կը կասեցնէ գայն, բարիին արգելք հանդիսանալով:

— ԲԱՆ ԶԶ —

Նարեկացին խորագնին աչքերէն չեն վրկպած նաեւ այն հակադրեցութիւնները, որոնք ծնունդ կ'առնեն հոգեկան յոյզերու պատճառած խռովքներէն ու կ'արտացո-

լանան մարմինին վրայ: Հետեւեալ հատուածին մէջ, մեղաւորի արտայայտութիւններուն փառաջուք նկարագրութիւնը այդ դասակարգին կը պատկանի.

Մտքին մըղած մարտին մէջ փոքր ոյժերէն պարտուած,
Ու սրտի թառամչէն՝ հագագին դուռն է հրդեհուած,
Քիմիի խոնաւ գոյացութիւնն ամէնուրեք տոչորուած:

Աւելի վարը, հեղինակը նման երեւոյթ — ներ կը նկարագրէ քիչ մը տարբեր ոճով:

Եթէ գիւտար տեսնեմ՝ կը սպասեմ մահուան,
Եթէ ձեռք մը բարձրացած՝ կը կոյանամ,
Թէ խորտուիլակ մը փոքրիկ՝ կը սարսիմ,
Եթէ լըսեմ թնդիւն մը բեքեւ՝ կ'ընդոստնիմ:

— Բան ԻԳ —

Նոյն տեսակէն է հետեւեալն ալ:

Անբեւոյթ կրակարան մը տաք կը բորբոքի մէջս անգովանալի,
Որպէս թէ անտես հալոց ու քրանք կ'եռան մէջս անշիջանելի:
Թոյնով ջրդեղուած մետի պաւներ կան ըշտեմարանին մէջ խորն իմ սրտի:
Ցաւի խիթեր մահացու կերպով կը խոցեն բոլոր երակներս լեարդի:
Ճեպելու անմար՝ չի կրնար ելիլ աղիքներէս դուրս խոտուակն երկունքի,
Ջերմութիւնն՝ որուն դեղեր չեն գործեր՝ երկամուսնիս է լափեր երկունքի:
Զափէ կարգէ դուրս դառն մաղձն ահա նախադուռն հասեր է իմ կոկորդի:
Վրեւանեցնող ձայներ աւաղի խիստ կը հնչեն մէջն իմ շնչափողի:

— ԲԱՆ ԻԶ —

Ահա՛ թէ ինչպիսի՛ հակադրեցութիւններով կ'արտայայտուին հոգեկան տաղնապները մարդու Փիղիքական կազմին վրայ, երբ «գգայուն ու խոհուն սիրտն է խոցուած խղի խայթերով»:

Այս պատկերալից երեւոյթները, որքան բանաստեղծական ներշնչում՝ նոյնքան ալ բնախօսական հակադրեցութիւններու ճշգրիտ նկարագրութեան ծնունդ առած փաստարկութիւններ են, որոնք լիովին կ'ապացուցանեն՝ թէ փոթորկած հոգիի մը խռովքները ո՛րքան բուռն կերպով կը ցնցեն մարդու ամբողջ մարմինը, շարժման մէջ կը դնեն մեր ներքին գործարանները, գեղձերը, ջրային զրութիւնը, ու խոռվայոյց ծփանքներ յարուցանելով՝ կը խանգարեն մինչեւ իսկ մեր ամենայնայնիւ բջիջին Փիղիքական եւ բնախօսական հասարակչութիւնը:

Այս տուեալներու լոյսին տակ, Նարեկացիին երեւան կու գայ իր անհատականութեան կրկնակ խոռոչաւորովը: Մէկ կողմէն՝ միատիպ հաւատաւորի արտայայտու-

թիւններովը՝ հոգին մարմինէն բաժնող անջատողական տեսլականովը, միւս կողմէն՝ դրապաշտ գննողի ուղիովը, հոգին մարմինին կապող փոխադարձ հակադրեցութիւններովը:

Աւելորդ է ըսել, թէ Նարեկացիին այս կարգի դիտողութիւններ չէ ըրած հակադրելու համար անջատողականութեան վարկածին, այլ մատնանիշ ըրած է զանոնք իրեն բնական երեւոյթներ, առանց պահ մը իսկ անդրադառնալու՝ թէ հոգեմարմնական չաղկապումէն ծնունդ առնող փոխադարձ հակադրեցութիւնները, զօրաւոր փաստեր են հոգիին եւ մարմինին միասնականութիւնը նուիրագործող:

Մենք դիտումնաւոր կերպով մատնանիշ ըրինք մարդկային բնութենէն բխող այդ տուեալները, նկատի ունենալով որ անոնք միջանկեալ օգտակար կը կազմեն անցեալի եւ ներկայի ըմբռնումներուն:

ՏՊԵԹ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

(Շարունակելի)

ՄԵՐ ԳՐՈՂՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ԱՅՆ որ օտար մամուլին քիչ թէ շատ կը հետեւի, տեսած ըլլալու է թէ գրողներու, հանրային մարդոց, արուեստագէտներու նամակները ստուար ու մասնաւոր հատորներով կը հրատարակուին: Ինչպէս նաեւ անոնց յիշատակներն եւ օրագրութիւնները:

Այս հրատարակութիւնները պատմական լաւագոյն ատաղձները կը կազմեն, եւ ընդհանրապէս լոյս կը սփռեն այդ դէպքերուն վրայ, յայտնելով անոնց ստացած կրթութիւնն ու դաստիարակութիւնը, կըրած ազդեցութիւնները, աշխատելու կերպը, աւելի մտերիմ ու անկեղծ մտածումները, նաեւ զգացումները: Այս հրատարակութիւնները կրնան բացատրել, կրնան ճշգրիտ կարգ մը մուծ մնացած կէտերը, դէպքերը, եւ այս ձեւով կը բացատրեն նաեւ անոնց գործերը, արուեստը, շատ անգամ լաւագոյն եղանակով:

Ինչպէս կ'ըսէ Քէյսէրլինկ, մարդոց գործերը հասկնալու համար, նախ զիրենք ճանչնալու է: Գործը՝ մարդուն յղացումն ու արտադրութիւնն է: Նիցշէ կը խոստովանի իր երկերէն մէկուն մէջ. — «Հետը հետէ, քիչ առ քիչ, ես համոզուեցայ թէ ինչ եղած է մինչեւ հիմա ամէն մեծ փիլիսոփայութիւնը. — իր հեղինակին խոստովանութիւնը, եւ տեսակ մը յուշագիր՝ ակամայ եւ աննշմար»:

Ստեֆան Զվալգե՝ կենսագրութիւններու անմրցելի վարպետը, իր յետ մահու հրատարակուած «Երեկուան աշխարհը» անուն գրքին մէջ, որ ընդհանրապէս իր յիշատակները կը կազմէ, կը պատմէ թէ ինք քննած է, ի միջի այլոց, Պէթսֆոլէնի ձեռագիրները ու հաստատած այս հանձարին տեսական պայքարը՝ իր գլուխ գործոցնե-

րը արտադրելու պահերուն, արտադրելու համար. հաստատած, նաեւ, թէ ինչպէս Մոցարթը դիւրութեամբ, մէկ գրիչով, մէկ շունչով, առանց սրբագրութեան կ'արտագրէր: Այս իրողութիւնները իրապէս ալ կը զգանք իրենց գործերուն ունկնդրութեան:

Իսկ ինք իր մասին խօսելու առթիւ, Ստեֆան Զվալգե կը յայտնէ թէ իր գրութիւններուն ինք տառնաբերող յաճախ ջրնջած է, տպագրութեան տալէ առաջ. ինչ որ կը բացատրէ իր խնամուած լեզուն, յստակութիւնը, ինչպէս նաեւ աւելորդաբանութեան ու ճապարկութեան պակասը՝ իր բոլոր գործերէն:

Այս հեղինակին մահէն յետոյ հրատարակուեցաւ նաեւ Պալլաքին վրայ գրած իր մէկ ուսումնասիրութիւնը: Հոն կը տեսնուի թէ ինչքան այս վերջինին թրջութեամբ ինք, սրբագրութիւնները եւ զանազան թուղթերը՝ որպէս վկայութիւն ծառայած են Ստեֆան Զվալգին, ներկայացնելու համար «Մարդկային կատակերութեան» հանձարեղ հեղինակին դէմքը, մարդը, գործը, զգացումները, բարձրութիւններն ու պղտիկութիւնները, գրականութիւնը, մտածումները: Եւ հոյակապ կերպով:

* * *

Բայց մեր՝ հայերու մէջ, շատ հազուադիւր են նամակներու, օրագրութիւններու հրատարակութիւնները: Մեր գրութէ բոլոր գրողներուն եւ արուեստագէտներուն մասին շատ բան կ'անդիտանանք եւ շատ քիչ բան միայն դիտենք:

Վերջերս, Վահան Թէքեանի մաս մը նամակներուն լոյս տեսնելը օգնեց նաեւ